



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-44-ԱՈ-30

2019թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Քննարկելով Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրության հարցը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

#### Պ Ա Ր Ջ Ե Ց .

Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի մայիսի 24-ի թիվ ԲԴԽ-36-Ո-84 որոշմամբ 2019 թվականի մայիսի 24-ից դադարած են համարվել Գագիկ Հարությունյանի՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի և նախագահի լիազորությունները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկվում են համապատասխանաբար Ընդհանուր ժողովի կամ Ազգային ժողովի կողմից ընտրված բոլոր անդամների թեկնածությունները:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի թափուր տեղը համալրվելուց հետո՝ փասնօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալ իրավակարգավորումներից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս Բարձրագույն դատական խորհրդում առկա են անդամների թվով 4 թափուր տեղեր, որոնք ենթակա են համալրման համապատասխանաբար Ազգային ժողովի և Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, որպիսի պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրությունը հնարավոր չէ անցկացնել Օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, և ղեկավարվելով Օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ընտրության հարցին անդրադառնալ Բարձրագույն դատական խորհրդի անդամների բոլոր թափուր տեղերը համալրվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Ս. ՉԻՉՈՅԱՆ**

**2019թ. հունիսի 27  
ք. Երևան**